

ՊԱՏՄԱՆՔ

ՊՈԽԻՆԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Տեղամասայ 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
2 քիւ մէկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Տեղամասայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Տեղամասայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

—o—

Մանուկան տղր
20 տարեկան



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

—o—

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Գրութիւնք եւ
չիւն տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒԴՄԱՐԶՔ

Վերջացող շաբթուան մէջ քաղաքական աշխարհի էն ուշագրաւ դէպքն է Աւստրո-Հունգարիոյ գա. հաժառանգ Ֆրանց Ֆերտիտանտ մեծ դուքսին Ս. Բէգերսպուրկ այցելութիւնը. թէեւ այս այցելութեան պաշտօնապէս այն գոյնը տալ կուզուի թէ՛ մեծ դուքսը ռուս կայսերական զօրաբանակին սպայ անուանուած ըլլալուն առ. թիւ իր շնորհակալիքը Չարին մատուցանել գացած լինի. բայց իրողութիւնը միայն այդ կերպով չմեկնուիր, միայն քաղաքավարական ձեւակերպութեանց վրայ չդառնար, այլ հըսուի թէ տնտեսական և քաղաքական կարեւոր պատճառներ հարկադրած են Աւստրո-Հունգարիան Ռուսիոյ մօտենալ:

Տնտեսական պատճառը առաջ կուգայ Գերմանիոյ մաքսային այն նոր սակացոյցէն, որ օտար երկիրներէ ներածելի ապրանքներուն ծանր մաքսեր կը սահմանէ, և որով ուրիշ երկիրներէ աւելի իր երկու սահմանակից կայսրութիւնները, Ռուսիա և Աւստրիա, մասամբ կը զրկէ գերմանական ընդարձակ հրապարակին վրայ իրենց ապրանքը քշելու շահագործումէն: Հետեւաբար զրկուող երկու պետութիւնք անհրաժեշտ պէտք կըզգան համախորհուրդ կարգադրութիւն մը ընել Գերմանիոյ այդ տարածութիւն ընթացքին առջեւ, իրենց տնտեսական շահերը պաշտպանելու: Պալագանեան միւս պետութիւններն ալ իրենց երկու մեծ դրացիներուն ընելիք կարգադրութեանցը կը սպասեն, որպէս զի իրենք եւս անոր համեմատ ընթացք մը բռնեն: Սերպիոյ խորհրդարանին մէջ անցեալ օր այս մասին եղած հարցադրման մը կառավարութիւնը բացորոշապէս այդ պատասխանը տուաւ:

Իսկ Աւստրո-Հունգարիան Ռուսիոյ մերձեցնող քաղաքական պատճառը աւելի ուշագրաւ է: Արդէն յայտնի է թէ քանի մը ամիսներէ ի վեր երեակ զինակցութեան կա-

պերը չափազանց թուլացան: Իտալիան Ֆրանսոյի հետ առեւտրական դաշնագիր մը ստորագրելէ յետոյ, քաղաքական կարգ մը խնդիրներու վրայ համաձայնութիւններ ու բարեկամական կապեր հաստատեց: Միեւնոյն տոնն Գերմանիոյ և Աւստրիոյ միջեւ երկար տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող սերտ յարաբերութիւնը վերջին լեհական և մաքսային խնդիրներով մտերմական ըլլալէ տարբեր կերպարանք մը առաւ:

Երեակ զինակցութեան կապերուն այս թուլացումին հակառակ Ֆրանցո-ռուս յարաբերութիւնը աւելի սերտացաւ, որուն մէկ զօրաւոր ապացոյցն էր Չարին Ֆրանսա ըրած վերջին այցելութիւնը, զոր պիտի փոխարինէ ի մօտոյ Հանրապետութեան Նախագահը Ռուսիա այցելելով: Իսկ Աւստրիոյ աւելի մտատանջութիւն պատճառող իրողութիւնն է Պալագանի մէջ ռուսական քաղաքականութեան տարիէ մը ի վեր խիստ զօրանալը: Ուրպիս, Սիւ Լեո և Պալկարիա արտաքին ու ներքին քաղաքականութեամբ միայն ռուսական զսպանակէն մղուելու հանգամանքներ ստացան: Թէեւ Աւստրիա այս երեք փոքր պետութիւնները հակաշնչու համար Ռուսիան ու Յունաստանը իր կողմը սիրաշահելու շատ մը միջոցներու գրմեց և ըստ երեւոյթի յաջողեցաւ ալ: Բայց այդ յաջողութիւնը պսակուած չէր կարելի համարել, նկատելով թէ Յունաստան Ռուսիոյ հետ ունեցած կրօնական կապերէն զատ՝ կրէտական խնդրոյն մէջ ալ անոր երախտապարտ է և դեռ աւելակալութիւն ունի Չարի կառավարութենէն այդ կղզին ուղղակի հելլենական դրօշին ենթարկելու: Մինչդեռ Աւստրիան այդ զուտ յունական խնդրոյն մէջ Գերմանիոյ հետեւելով անկարելի մնացած էր: Ռուսի Պալագանեան գոգծելու մէջ վիէննայի կառավարութիւնը Յունաստանը իրեն հետ հաշուելու ապահովութիւնը չէր կրնար ունենալ: Իրաց այս անպաստ կացութեան մէջ Ֆրանց Եօզէֆ ծերունազարդ կայսեր ուրիշ բան չէր

մտար, բայց եթէ 1897ին հաստատուած Ռուսո-Աւստրո-Հունգարական համաձայնութիւնը—Պալագանեան թերակղզոյ սրաքիշքոյն նկատմամբ—հիմ բռնելով, նոր մերձեցում մը յառաջ բերելու ճիգեր թափել, և թերեւս ի հարկին, իր ձգտումներէն բաներ մը ալ զոհել, որպէս զի յաջողի զօրացող երկեակ զինակցութեան բարի տրամադրութիւնը իրեն շահիլ, ու ինք ծերացած տարիքին մէջ ներքին անվերջանալի խառնաշփոթութիւններու հետ արտաքին դժուարութիւններու եւս բաղխելու վտանգէն ազատիլ:

Ահա այսպէս կը մեկնուին Ֆրանց Ֆերտիտանտ մեծ դուքսին ի Բէգերսպուրկ Չարին տուած այցելութեան պատճառները:

ԳՈՒՐՈՒՄ

ԹՈՒՆՑԻԿ ԱՎԱՐԱԿՆԵՐ

Մեր կուսակցութեան անբաւականութեան և գոհացուցիչ ըլլալու ամեն հանգամանքէ զուրկ ըլլալուն բնական հետեւանքը չէ՞ր համարեր՝ իրենց քթին տակ, հետզհետէ ծնունդը «Հայ Ժողովրդային Միութիւն», «Հայկական Մասնախումբ» և այլն անուն մարմիններու, որոնք հետզհետէ կաճին և կուսակցութիւններու շուրջ մօտաւորապէս ստեղծուեցաւ յութիւններ ձգել կապուեան լրջօրէն:

Այդ մարմինները՝ տարտամ, անորոշ ու խառնակ մտածումներու ծնունդ, չեն նմանիր սակայն սաղմնային վիճակը անցնող մանուկին, որ վերջապէս կատարելութեան հասնելու կոչուած է, ամեն ձեւ ստանալէ ու կեանքի աւան պայմաններու բովէն անցնելէ յետոյ:

Խեղանդամ թէ առոյգ, ժողովուրդին զաւակներն են անոնք, որոց ծնունդին մեծագոյն շնորհը կը պարտինք մեր կուսակցութեան խորունկ տգիտութեան, որով երկար տարիներէ ի վեր անտեսել փորձեցին անոր արդար պահանջները և տեղի տուին այսպէս ուրիշ

գրօշներ փնտռելու զինուորագրութեան համար:

Այդ պահանջներն էին իր՝ ժողովուրդի նիւթական ու բարոյական ուժին պարկիշտ ու անխարախ կրթագութիւնը:

Նիւթականին հաշուետուութիւնը Աւստրիոյ դատաստանին մնացած է, պայմանաւ որ ժողովուրդը կարենայ՝ այդ գաղտնի օրը, մէկէ աւելի պաշտօնական խաղաղութեանց զարչելի թիւերը ներկայացնել տոպրակ տոպրակ:

Իսկ բարոյականին հաշիւը մէկ տեղն է, նոր շարժումները արգարացնելու բռնա ու միամիտ ճիգով մը՝ իրենք են, որ կը քննադատեն իրենց անցեալ գործուհեւութիւնը, անորոշ, անստոյգ և շատ անգամ սխալ անուանելով զայն:

Կղզիներ կան, որոնք հրաբուխներու աղբեղութեան տակ՝ օր մը չէ օր մը, կորուսելու դատապարտուած են անխուսաբելիօրէն:

Իրենց գործելու եղանակովը, իրենց կազմութեամբ և ժողովուրդին վստահութիւն չտալու իրենց յամառ ու տեւական ընթացքովը մեր կուսակցութիւններն ալ դատապարտուած են լաւաներու այդ շերտ լոգանքը առնելու անպատճառ:

Խարբաղաբար ծովին մակերեսին վրայ կորսուած կղզիներու տեղ նորեր բուսնելու բնական երեւոյթը, աւելի ապահովիչ հանգամանք մը կստանայ ի մեզ, արծարծուած տեսնելով լայնօրէն ժողովուրդին ամեն դատաւարդին մէջ յեղափոխական գերազանց ոգին, որ տարակոյս չկայ թէ ազգը պիտի չլծողու առանց կռիւի սուրբ ու փրկարար դրօշակի:

Ըսել է, հիները ողբալու պատճառ մը չպիտի ունենանք երբեք:

• • •

Եւ սակայն նորերն ալ հնար եղածին չափ անխելի ընելու ջանքը մեր մտահոգութեանց է՝ առաջինը պէտք է ըլլայ, որպէս զի ասուպի միեւնոյն դերը կատարած չլլան մեր միգամած միջնորդ տին վրայ և խեղդուելով նոր լա-

ւաներու մէջ, անոնք ալ հիններու պէս չկորսուին, քանի մը տխուր հետքեր թողնէ վիշտ:

Այս բաղձացուած նպատակին հասնելու համար ալ ժողովուրդին պահանջը պէտք է ըլլայ որոշ, մէկին ու յստակ:

Մենք ժողովուրդին ձայնը կը նկատենք «Հայ ժողովրդային Միութիւն, Հայկական Մասնախումբ» եւն. անուններու տակ երեւան եւ կամ խումբերու ազնուակը:

Ասոնք ամենքն ալ երբ կրտսին թէ, իրենց նիւթական ու բարոյական ուժը պահելով պիտի գնեն օր մը ազգին վստահութիւնը վայելող կազմակերպութեան մը տրամադրութեան տակ, բոլորէ քաղաքացիական կրօնական իրենց զոյժը մարմնները այդ վստահութիւնը չեն վայելիր:

Այլ ինչ հարկ ուրեմն այդ կուսակցութիւնները միացնելու միտմամբ պարտականութիւններն ալ առնել իրենց ուսին վրայ:

Ինչ հարկ հասնեն ի վեր թիւարեւորութիւնները պիտի քննարկուին, որոնք քործունէութեան մը, որ ամբողջովն ու որոշ նպատակի մը կիրարկումով, շատ աւելի օգտակար կըլլար վստահութեան ներկայ խախտող դրութեան մէջ:

Ինչ ասոնք ալ չեն հասնար տակաւին թէ՛ աղէտը ազգին է եւ կուսակցութիւն ըսուածն ալ պէտք է ըլլայ ամբողջ ազգը եւ թէ այսօր նիւթական ու քաղաքացիական պարտականութիւններն ալ քաղաքացիական վստահութեան անհետացումով վեր բռնուած դրոշակի մը պէտք կայ, ուր ամեն ոք ըլլայ կուսակցական կամ ոչ, կրնայ ապաստանել անխտիր, երբ պարհայտ է ան եւ չէ տրուած անոր բազմաթիւ աղտոտ բնութեամբ, որ մարտնչելով չգիտեր:

Ինչ տարօրինակ երկդիմութիւն, մէկ կողմանէ այս մեծ դրոշակը բարձրացնելու միտ կողմանէ պղծակցեցնել զայն, զոյ եղած կուսակցութիւնները միացնելու պէս խօսքեր ալ ընելով:

Ու յետոյ ինչ տրամաբանութիւն եւ կամ ինչ առողջ միտք կայ հաճոյքին մէջ, որ 21 տարեկանէն վար եղողները կը զրկէ մասնակցութենէ գործի մը, ուր ամենէն աւելի պէտք կայ թարմ ուժերու եւ ուր անոնք ամենէն կանուխ կը զգան հայրենի աղէտներու սարսուռը իրենց կաշիին վրայ:

Այս տողերը կողոպտում մասնաւորապէս Ս. Բաղդաթի Հայկական մասնախումբին, որ թող տուած էր ինքզինքնին նմանօրինակ թերութիւններով երեւնալու իրաւունքը իջեցնելու մէջ:

ԱԿՏԻԸ

Դիտ. խմբ. — Առանց բողոքովին հակադրութիւն ըլլալու այս յօդուածի ոգոյն, նշանակութեամբ զայն կը հրատարակենք, որպէս զի քաղաքացիական թեման մասին տարբեր կարծիքներ իրար բաղադրելով լուսաբանուին:

ՅՈՒՆԵՍԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՄԵՐՈՒ ՎՐԱՅ
1902 Յունուար 20 ի հարցապնդումը

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Պ. Կիւրապի Ռուսիէ. — Պարոններ, միտքս շատ զէշ բացատրեցի, ու այդ առթիւ ներողութիւն կը խնդրեմ, եթէ արտաքին գործերու նախարարը, այս բնական վրայ բերած դիտողութեանց մէջ, Ֆրանսայի թուրքիոյ դէմ զարգացան գործունէութիւն մը գրգռելու նպատակը տեսաւ: Ես միայն հարցուցի թէ մեր նախարարին թրքական ջոկերը առաջումը, որուն նախաձեռնութիւնը, յանուն կառավարութեան, արտաքին գործերու նախարարը ունեցած էր, Սուլթանը իր բնաջնջումի ծրագրին ինչն ես կենալու հրաւերէ մը ներշնչուած էր: Հարցուցի թէ նախարարը, իր ազգակիցներուն նիւթական շահերը յարգել տալով մէկտեղ, ինչ միջոցներով պաշտպանած էր նախարարական թաղայական ինչքան ունանալու հարցուցի իրեն թէ ինչ ըրին այդ բարոյական ինչքան պահպանումին համար: Կը ցաւիմ հաստատելու թէ արտաքին գործերու նախարարին պատասխանը բացարձակապէս բացասական է:

Թէ թրքական ջոկերու մէջ մեր նախարարին ներկայութիւնը կրտսինքնը արգելած ըլլայ, այդ ստորագրէ. ու ատ իսկ ապացոյց մըն է թէ Սուլթանը կարգի հրաւերելու դիւրին է: Հայերուն ձեռք չտրհապարտ ըլլալը, պարոն նախարար, բողոքովին բնական է: Բայց կը հարցնեմ ձեզ. անհաղթիմ էք բնաջնջումի մասնաւորապէս տարբարող ժողովուրդին ապագային համար: Վաղը ինչ պիտի պատահի:

Թրքական ջոկերու մէջ գտնուեցանք Հոկտեմբերի վերջը ու Նոյեմբերի սկիզբը: Այն ատենէ ի վեր ձեռք եկաւ, զիջելով ձեռքներու մէջ ծածկելով Հայաստանի հաղորդակցութիւնները արգելելով: Եւ 1901-1902 ձմեռան, ինչպէս 1893-1894 ձմեռան, թրքական նոր արշաւանքներու ցաւը չզգացինք: Կը կրկնեմ թէ այդ կարելի չէր, վասն զի հաղորդակցութիւնները արգելուած են:

Բայց սա բանէն վախճալու է որ, թրքական ջոկերու մէջ Ֆրանսական նախարարին ներկայութեան վայրէջանական արտաքինութեան մը ետք, կոտորածները անմիջապէս արգելելով, Սուլթանը զատուելով վերստին չսկսի վասն զի Ֆրանսայի կողմէ եղած պահանջներուն մէջ չլսուած բան մը որ ցոյց տար իրեն թէ իր հրամաններով, իր անձնական մղումով եղած զէպքերու մասին զինքը պատասխանատու կը ճանչնային, ու Սուլթանը հող, ինչպէս 1894-1895 ին, շարունակելու քաջալերութիւն մը չտեսնայ:

Պ. Իրենի Վիլիսն. — Շատ լաւ:

Պ. Կիւրապի Ռուսիէ. — Կէս պաշտօնական ծանուցագրի մը համաձայն, զոր մեզ բաշխել տուիք, պարոն նախարար, պայմաններ դրեք զաթոլիկ եկեղեցիներու, լատին եկեղեցիներու, քաղցեական եկեղեցիներու համար:

Նախարար. — Դպրոցներու համար ալ:

Պ. Կիւրապի Ռուսիէ. — Դպրոցներու համար ալ, կատարելապէս ճիշդ, պարոն նախարար:

Լատին ձէպէ քանի մը եկեղեցիներ, զոր կոտորողները ու հրկիզողները

հայ եկեղեցիներու հետ շփոթած էին, պիտի վերականգնուին, բայց այն եւ եկեղեցիները, ուր Հայերը ապաստանեցան, եւ որոնք, բէգրոլով որոգուած, այրեցան: Հայաստանի անհամար եկեղեցիները որոնք լատին խաչով պաշտպանուած չեն: Զէք գիտեր որ ձեր լատին վերջիններուն ու առաջիններուն մէջ ձեր ըրած զանազանութիւնը ստորագրուածի մը կը մատնէ անոնք որոնց մասին չէք հետաքրքրուիր:

Ահա թէ ինչ զիս կահարեկէ, պարոններ: Այո՛, արեւելքի մէջ մեր միջամտութիւնը կրցաւ կոտորածները զարգացնել, բայց այդ զարգացումը կարճ տեւողութիւն մը պիտի ունենայ: Գիտնալուսն պէս որ հայեր կոտորողները անպատիւ կը մնան, Համիտի սպանիչները չի վիշտակ պիտի վազեն: Ու ձեր առաջ բերած կարճ ընդհանուր լայնօրէն հատուցում պիտի գտնէ այն ազգութիւնները զոր դահիճները պիտի ունենան կոտորած ժամանակը դարմանելու համար:

Կը վախճամ, մէկ բառով, թէ դարձեալ վերադարձին, Հայաստան 1902 ինչպէս 1895 ի կացութեան մէջ: (Շատ լաւ, շատ լաւ, ծախսկողներ):

Միայն, սա տարբերութիւնը պիտի ըլլայ որ 1895 ին, ոչ մասուլ, ոչ եւրոպական խորհրդարանները տեղեկութիւն չունէին: Այս անգամ Եւրոպան տեղեկացած է, ու եթէ 1896 ի աղէտները վերսկսին, Եւրոպան անոնց աղակի պատասխանատու պիտի ըլլայ: (Ծախսկողներ ծախսկողներ):

Նախագահ. — Երկու բանաձեւեր ընդունած եմ:

Առաջինը, Պ. Պ. Իսնաօրի եւ Մալաթիայի, սպաշտ յղացուած է:

«Երեսփոխանական ժողովը, կառավարութեան յայտարարութիւնները յարգելէ ետք, օրակարգին կանգնի: Երկրորդը, Պ. Ռուսիէն, սպաշտ կնքուած է:

«Երեսփոխանական ժողովը, վստահ ըլլալով կառավարութեան վրայ որ Եւրոպայի ուղարկութիւնը պիտի հրաւիրէ Սուլթանի յանձն տուած պայմաններուն յայտնի բնաբարոյմի վրայ, օրակարգին կանգնի:»

Պ. Իրենի Վիլիսն. — Պ. Ռուսիէի օրակարգին համար նախապատուութիւն կը պահանջենք:

Նախագահ. — Նախապատուութիւնը արդէն պահանջուած է իր օրակարգին հեղինակներու կողմէ:

Արսաֆիլ գործնաւ նախարար. — Կառավարութիւնը Իսնաօրի ու Մալաթիայի օրակարգը կընդունի:

Պ. Տընի Գոշեն. — Ոստք կուգեմ: Նախագահ. — Ոստքը Պ. Տընի Գոշենին է:

Պ. Տընի Գոշեն. — Թոյլտուութիւն կը խնդրեմ Պ. Ռուսիէի օրակարգին ի նպաստ բառ մը աւելցնելու:

Բնաւ չեմ տեսնիր թէ կառավարութիւնը զայն ինչու չընդունէր: Արտաքին գործերու նախարարը խօսեցաւ մեզ այն անհրկու խնդիրներուն վրայ զոր տարախորժ գործունէութիւն մը կընար յառաջ բերել: Իրեն զիտել կուտամ թէ վստահները գուցէ կարծածին չափ մեծ չեն, թէ ինքն իսկ զանոնք կրցաւ գնահատել, երբ, յանուն Ֆրանսայի, շատ հաստատաւոր վարմունք մը ունեցաւ, որուն համար զինքը մեղադրելէ հեռու եմ:

Արեւելքի այդ խնդիրը Եւրոպայի հանգստութեան համար միշտ սպառնալիք մըն էր: Բայց ատեն մը, արեւելքի մէջ միջամտութեան մը համար վախճուած վտանգները աւելի քիչ սպառնալիք են, ու խնդիրները,

փառք Աստուծոյ, այն տեսակէն են որոնց լուծումը Եւրոպան շատոնց ստացաւ: Խնդիրը զանոնք գործադրելու վրայ է:

Պ. Տընի Կիւրապի. — Շատ լաւ:

Պ. Տընի Գոշեն. — Այդ լուծումը Պերլինի զանազան խօսքերուն մէջ իսկ կը գտնուի: Այժմ իսկ չէիք ըսեր թէ Սուլթանը ստիպուած էր ատեն ատեն պետութիւնները ծածկութեանը գործադրել տուած բարենորոգումներու ու անոնց իրագործումին մասին: Այդ բարենորոգումնք մասին ձեզ բնաւ հաշիւ տուած, զանոնք գործադրեց, տեղի չկայ այս բանը անկէ աւելի յայտնի կերպով պահանջուի: (Շատ լաւ, շատ լաւ, աջակողմը):

Վերջապէս ձեզմէ այսքան հարկու խնդիրներու յարուցումը չենք պահանջեր, ձեզ չենք հարցներ գիտնալու թէ թուրքիան պիտի անդամատուի, պէտք է անկախ ազգիւր ստեղծել, եւ ամենուս ալ երաշխիքներ տալ: (Շատ լաւ, շատ լաւ): Ոչ, խնդիրը միմիայն իրագործուելուն վրայ է զանազան մը որ կըսէ թէ, Եւրոպայի պատուին համար, ալ պիտի չպատահին այն խառնակութիւնները, սոսկումները որոնց ներկայ գտնուեցանք մինչեւ հիմա: Նոր բան մը ձեզ չենք հարցունիր: ձեզ կը վստահինք իրագործումին երկար ատենէ ի վեր վճռուած խնդրոյ մը լուծումին համար: Ոչինչ կամ հոս նոր ու վնասակար: Ուրեմն ձեզ կը վստահինք, պարոն նախարար, այս պատճառաւ ինչ կը թուի թէ ձեզ առաջարկուած օրակարգը ոչ մէկ կերպով ձեզ չի թելուծուի:

Ըսուածին միակ բառ մը աւելցնելու համար, չորս հայերէ գրուած նամակ մը ունիմ, որոնք առանց դատաստանի չորս տարիէ ի վեր սոսկալի բանտի մը մէջ փակուած են:

Կրնանք այդ նամակը կարգաւ, պիտի տեսնէք թէ պէտք կայ երկար ատեն չարգելուած պայմաններու գործադրութեան: (Մոխախարութիւններ աւաղողիկն ու զաւազն նստաւաններու վրայէն):

Նախագահ. — Նախապատուութիւնը յաջորդաբար պահանջուեցաւ ներկայացուած երկու օրակարգերու համար: Պարունակութիւնները կը յիշատակեմ: (Երկու օրակարգերու ընթերցում):

Ժողովոյն կարծիքը կուգեմ կառավարութեան ընդունուած Իսնաօրի ու Մալաթիայի օրակարգին ի նպաստ պահանջուած նախապատուութեան մասին:

Պ. Տընի Գոշեն. — Բաղդ չունիմ, երբ աղամ մի կառավարութեան վրայ յոյս դրի:

Երեսփ. ժողովը կը քուէարկէ ընդունելութիւնը Իսնաօրի ու Մալաթիայի օրակարգին:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐ

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՉ, 8 Փետրուար

Երկու Հայեր Ֆրանսական դատարանին առջեւ

Երկուքն ալ յայտնի Բարիգի Հայ գաղութին մէջ, երկուքն ալ վաճառականներ են պատուաւոր, մին Պ. Իսկէնտէր վաճառական աղամանդի եւ միւսը Պ. Մ. Գալփաք ճեման, նոյնպէս վաճառական եւ ուսուցիչ Բարիգի Սրեւելեան վարժարանին մէջ: Արդէն յայտնի է

թէ (որովհետեւ մեր թերթերն ժամանակին խօսեցան այս մասին) քանի մը աւել առաջ Բարիկի մէջ պատուոյ ատենան մը տեղի ունեցաւ, որուն մէջ Պ. Մ. Գալփաքեան հաշիւ կը պահանջէր կարգ մը բարիքաբանակ հայերու կողմէն, Պ. Խակէնտէրէն. Պ. Խակէնտէր այդ պատուոյ ատենանէն յետոյ տեղի ունեցած զանազան խօսակցութիւններէն, նիւթական փնտռելու պատուոյ արատ ստացած լինելուն համար, դատաստանի դիմած էր. Դատաստանը տեղի ունեցաւ փետրուարի 1ին և Պ. Գալփաքեան դատապարտուեցաւ 150 ֆր. տուգանքի, որմէ 100ը վճարելու է Պ. Խակէնտէրին—որը թէպէտ 5000 ֆրանք պահանջած էր—և միւս 50 ֆրանքը դատարանին. կը լըսենք հիմա թէ Պ. Գալփաքեանի փաստաբանը դիմեր է բարձրագոյն Ատենին, դատը նորէն սկսելու համար:

Ինչ պէտք կար օտարներու առջեւ մեր ներքին կռիւները պարզելու. մեր աղտոտ շահերը մեր մէջ չէինք կրնար լուծալ, որ գացին դատաստաններու առջեւ ալ արատաւորեցին մեր արդէն բաւական ընկած անունը և պատիւը. Եւ ինչ կը նշանակեն այն կարգ մը յիմար խօսքերը որոնք դրուած էին Պ. Խակէնտէրի փաստաբանին բերանը... և զորս նա «ափուր զուգուր» արտասանեց ամբողջ հայ և օտար ներկաներու առջեւ:

Մէլիք Ս. ԴԱԻԻԹԵԿ

Դիւ. իւր. — Պ. Մէլիք Ս. Դաւիթբէկ կը ցաւինք որ շատ միակողմանի կը դատէ Խակէնտէր—Գալփաքեանի խնդիրը, որուն մէջ կը սպասէինք որ ինք չէզոք դիրք մը բռնէր ու երկու կողմի թերութիւնները միաժամանակ ցոյց տար:

Մենք պատճառ մը չունինք Պ. Գալփաքեանի դէմ Պ. Խակէնտէրը պաշտպանելու, կամ կողմնակցութիւն բնորոշ սակայն դէպքերու այդ ծանօթ շարքին մէջ էն ուշադրաւ իրողութիւն մը սքողելու համար որոնց ցոյց տուած ճիշդութուն հանդէպ չենք կարող լուռ մնալ առանց խղճաբարութելու:

Արդ, կը հարցնենք Պ. Ս. Դաւիթբէկի թէ իր թղթակցութեան մէջ երբ խօսքը կընէ կազմուած պատուոյ ատենանին, ինչո՞ւ չբարեհաճիր այդ ատենանի վճիռը եւս յիշել, վճիռ մը որ Պ. Խակէնտէրը անպարտ հաշիւեց (սխալմամբ միայն թիւնք)։ Ինչո՞ւ Պ. Դաւիթբէկ քաջութիւնը չընենար առանց վերապահումի ըսելու թէ Պ. Գալփաքեան ըստ իր գրաւոր խոստման, իր ընտրած ատենանին վճռոյն փոխանակ զլուխ խոնարհեցընելու, ելաւ իր ապացուցանել չի կրցած ամբաստանութիւնները վերատիւ կրկնել հոս ու հոն ու շատերէ յարգուած պատուաւոր վաճառականի մը անունը ու վարկը բեկանել ջանալ։ Այս անանքի ընթացքին առջեւ ինչ կը մնար Պ. Խակէնտէրին ընելու օրէնքը ու ժին զիմելէ զատ։ Որ ոչ լուրջ ունկալք, լուրջ քիկալք։

Կը ցաւինք, ու իսրտէ կը ցաւինք որ Պ. Գալփաքեան իր ընթացքով ստիպած եղաւ Պ. Խակէնտէրը որ պատարանի դիմէ:

Այն որ իր պատիւը պաշտպանել չընտրէր, իր պատկանած համայնքին պատիւը բնաւ չէ կարող պաշտպանել։ Իսկ այդ խնդրոց աւելի ցաւալի հետեւանք եղաւ նորակազմ «Հայկական Միութիւն»ի խաբարումը, որուն համար ըսողներ կան թէ Գայաեան եւ Գալփաքեան թէեւ հին հակառակորդներ Պ. Զօպանեանի, անգիտակցաբար գործիք եղան խմբակի մը ձեռք, որուն ձգտումն է ազգային այդ կարգի կազմակերպութիւններ արգիլել եւ Պ. Պ. Թամաշեանի, Ղաւաքաբանի ու Խակէնտէրի նման դերքի տէր անձնաւորութիւններ վնասեցնել, որպէսզի հրապարակը իրենց մնայ։

Վ Ե Ց Ա Մ Ս Ե Ա Ց

Վիճակացոյց գործառնութեանց
Նիւստասիոյց Ընկ. Ռուստի
1901 Յուլիս 1 — 1901 Դեկտեմբեր 31

ՄՈՒՏՔ	Յր.ՍՃ.
Առաջին ութամսեայէ մնացած պարտատ դրամ	36.40
Պնակի հասոյթ	238.55
Բաժնեկրիներէ	387.60
Երկու եղբորու մօրթերէն եւ իւղէն	323.90
Մատաղի հանգանակութեանց գոյացած	132.50
Շուկան պտտցուած գանձաւանկէ	166.85
Մեծելակառքէ հասոյթ	110 —
Ամուսնութեան առթիւ նուէրներէ	52 —
Տօնախմբութեանց առթիւ գանձանակէ	39.70
Պատահական նուէրներէ	26.50
Կնքահայրութեան առթիւ նուէրներէ	10 —
Ազգային պանդոկէ եկած վարձք	13 —
Ծաղկեփունջէ նուէր	21 —
	1558.00

ԵԼՔ	Յր.ՍՃ.
Դրամական օգնութիւն զանազան անձանց	287.05
Թաղիս աղքատիկ ուսանողաց զգեստ եւ կօշիկ	303 —
Մատաղի համար առնուած երկու եղբորու եւ այլ եւ այլ ծախուց	368.30
Փոխ տրուած ստակ զակազան անձանց	109 —
Ճանապարհածախս աղքատ ծամբորդաց	92.20
Վճարուած հին պարտքի Մ. Վալդանեանի	85 —
Դեղագործի վճարուած առ հաշիւ	90 —
Դեղագործի վճարուած նոր առնուած դեղերու համար...	24.30
Մեծելակառքի կառավարին	77 —
Շուկան գանձանակը պտտցընողին նուէր	21.20
Չանազան ծախք	16.80
Դիւանական ծախք	17.55
Պատրաստ դրամ	67.10
	1558.00

Ի գիտաց Աղբ. Ընկերութեան Վ. Աստիւազարի Վ. Աստիւազարի Փ. Գ. Սայիսեան Թեյի Փախիզեան Ռուստուք, 31 Դեկտեմբեր

ՄԱՆՈՒԹ. — Մանրամասնութեանց համար տեղեկութիւն առնել փափաքէք կը հրաւիրուին զիմել ընկերութեան Գործադիր Ժողովոյ Դիւանին:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Այսօրուան մեր տաճկերէն բաժնին մէջ կը գրեմք քաղաքի Տիւրկաւարչին մէկ քանի առաջնակարգ պուրկար պաշտօնեաներու հետ մեր եկեղեցին այցելելու մասին տեղեկութիւններ։ Բայց արդար գիտողութիւն մը չուզելով օտարներու եւս հասկանալի ընել, հարկ կը դառնեք գոնէ հայերէն երկու բառով բացատրել։

Մեր այս խօսքերը կրկին թաղական արհմիութեան ուղղուած են. բայց հարկ չէ ասոր մէջ այ հակառակութեան օգի փնտռել, որովհետեւ նոյն արդէն անոնց ճակատին դարձուեցաւ Տ. Տ. Մուրաթ Մ. Սարգիսեանի և Յակոբ Մամիանի կողմէ, որոնք տեղացի ազգայնոց ամենէն աւելի բանէ հասկցող հզակուն զոյգը կը կազմեն։

Երկու օր առաջ յուր տուած էր թէ Տ. կառավարիչը իրեններով կիրակի առաւօտ պիտի այցելէ հայ եկեղեցին ու արարողութիւնէ կետոյ խորհրդարանը, ուր ընդունելութեան համար բացի թաղականներէ յարմար ազգայններ գտնուելու էին։

Ինչ կըսէք, երբ մարդիկը կուգան ու ձօտ երկու ժամու չափ եկեղեցին յօտկայս կը մնան, ու յետոյ թաղ. խորհրդարան կը մտնեն և քառորդ ժամու չափ ալ հոն նստելով, հայ ազգին այնչափ համակրական և յուսադրական խօսքեր կրեն չոր ու ցամաք բերանով, Դրսէն ներկայ գտնուողներս թաղականներու ակնշիւն կը փափանք «ո՛ր է անուշ մը, գոնէ սուրճ մը չէ՞ք պատրաստած»։ ու ի զուր կը ջանանք հաստատական պատասխան առնելու. ահա հիւրերը կը մեկնին։

Այս խոշոր պակասը չենք գիտեր մոռցնել թե՛ն արդիւնք է թէ տղիտութեան. բայց սա լուրջիտեք թէ ամօթը, ոչ թէ 3-4 թաղականներու, այլ վառնայի ամբողջ հայութեան կը վերադարձի։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վելլին ու բոթ օրուան խառն ժողովը Տ. Գեորգ եպիսկ. Երէց. Կարիկիոյ կաթողիկոսութեան հրաժարելուն առթիւ տուած ինչ ինչ բացատրութիւնները ու փոխանակուած գրութիւնները ընդհանրապէս անկարելի կը համարի իր հրաժարականը յետոյ կողմէ և անգրգռելի կը մնայ, և նկատելով որ ալ եւս միջոցներ կը պահին զինք համոզելու, հարկ դրսեցնէ ընդունին Տ. Երէցեան Սրբազանի հրաժարականը, և որոշեց ձեռնարկել օրինական գործողութեանց, կաթողիկոսական նոր ընտրութիւն կատարելու համար։

— Բրո Սրմէնիայէ կիմանաք թէ Մ. Յրանսի տը Բրէսանսէ Հայկական խեղրոյ մասին ճառ մը պիտի խօսի փետրուար 10ին Ժընէվի «Վիքթորիա Հայ» սրահին մէջ, որ Եւրոպայի հայ ուսանողաց տրամադրութեան տան կը գտնուի այդ օրը։

— Անդրանիկին խումբը Ս. Առաքելոց վանքէն դուրս ելնելէ վերջ ապաստանած էր Նորչէնի մօտ, Սչոյ ձորը վանայ լիճէն բաժ.

նող լեռներու կողին վայ, որ Մուշէն Բաղէշ երկարաձգուող ճամբուն կիշխէ։ Կառավարութիւնը իմացաւ ֆէտայիներուն ներկայութիւնը, ու զրկեց անոնց դէմ վաշտ մը Համիտիէ հեծելազօրք և հեծեալ ոստիկաններ։ Անդրաւնիկի մարդիկը միայն ինք հօգի, զինուորներուն ընդհարեցան. սպաննեցին ոստիկաններու հրամանատարը ու ծանրապէս վիրաւորեցին Համիտիէներու հարկաւարները. յետոյ իրենց հաշուեցան անմիապէս, իսկ իրենց հակառակորդները խոհեմութիւն համարեցին հետապնդումը չի շարունակել։

Բրո Արմէնիա

— Մեր նախորդ թիւով հրատարակուած նամակի մը համեմատ, Նիքօքօլի մէջ պուրկար աղջկան մը հետ ամուսնանալ ուղղով Արմատանցի խաչիկ Պետրոսեան անուն սափրիչ երիտասարդը ու իր ամբողջ զերգանտանը ճանչցող չորս համագիւղացիներ խմբագրատուն եկան ու վկայեցին թէ իշխալ խաչիկը հայրենիքի մէջ ամուսնացած է ու իր կինը ողջ է։ Այս վկայութեանց վրայ նոյնիսկ կիրակի օր երկու նամակներ զրկեցինք Նիքօքօլի ծանօթ ազգայնոց, յանձնարարելով որ տեղւոյն պուրկար կրօնապետին ներկայանան ու իրողութիւնը իմացնեն, որպէսզի կրկնամուսնութիւնը տեղի չունենայ։

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՅՈՒՅԱԿ

Պրախայէ

Փոխադրեալ 269,40 ֆրանք։
Տ. Տ. Ինկո Մարգար 1. Մարգար Խաչիկ 1. Եղօ Փոթս 1. Տօնիկ Սեւրո 1. Ղազար Ասատուր 1. Բարսեղ Գաւառեան 2. Սէֆէր Աբրահամ 1. Սահակ Ժաղօ 1. Եղարթ Անուշեան 4. Գրեհար Միլիտի 1. Հայրապետ Ղազարեան 2. Գեորգ Սէֆէրեան 2. Յովհաննէս Դէրտէրեան 1. Եղիա Կարապետեան 1. Սարգար Գրիգորեան 1. Կարապետ Ղուկասեան 1. Աղամ Գալուստեան 1. Պողոս Յովհաննէսեան 1. Մեղքօն Աստեան 1,15. Մանուկ Խաչիկ 1. Սահակ Ըղլաթեան 1. Սահակ Պողոսեան 1. Սահակ Յովհաննէսեան 2. Գեորգ Աստեան 1. Գրիգոր Յարութիւն 1. Դէսրդ Վարդան 1. Սովլէս Պողոսեան 2. Կիմակոս վարդապետ 2. Յարութիւն Յովհաննէսեան 2. Սեդրակ Մանուկեան 2. Ղազար Գրիգորեան 1. Թաղէոս Ղազարեան 1. Սեւրոս Մելիքեան 1. Սեդրակ Սեւրոյ 1. Յարութիւն Սեւրովրէ 1. Չաքարեալ Ղազարեան 1. Մկրտիչ Եղօ 1. Սահակ Գեորգեան 5. Միհրան Պողոսեան 2. Սահակ Դաւիթ 2. Յովհաննէս Թովմաս 1. Կարապետ Մանուկ 1. Ղազար Պետրոս 1. Յովհաննէս Պողոս 1. Սիսակ Յակոբ 1. Մանուկ Յակոբ 1. Մկրտիչ Յակոբ 1. Տիկին Մանուկ Մուրատեան 2. Մուրատ Վարդան 1. Սահակ Աբրահամ 1. Սողոմոն Վարդան 1. Վասիլ Գրեհար 1. Յովհաննէս Նիկողոս 1. Բարսեղ Պողոս 1,50 Պաղտատար Մելքոնեան եւ Ալիքսան Մանուկեան Ընկերք 5. Լուսիկեան 2. Սեւրոյ Արամեան 2. Նազարէթ Փանոսեան 5. Սահակ Մարգարեան 5. Յարութիւն Միքայէլեան 5. Յարութիւն Չաքարեան 1.

Գումար 367.05:

(Շարունակելի)

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна